վերստին ուխտիւ և միաբանութեամբ պայծառացնելու զսուրբ Յովհաննու վանքն, և պատելու զայն յաւերմանց և 'ի կործանմանէն, յորում զտանի այժմ, ինչպէս տեսողք եւ կ' վկայեն. կ' յուսանք եւ որ փոքր միջոցում նորա տեղագրութիւնն էլ Արարատի միջոցաւ կ' հրատարակենք:

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:

## ՍՈՒՐԲ ԹԱԳՈՐԱՑ ՋՈՒՐ

Հայք՝ Քրիստոսի Տեառն մերոյ պատուէրի հրամանն քաջ 'ի միտ առնելով, որ սուրբ Աւետարանի մէջ սրբազան Առաքելոց համար կ'աւանդէ ասելով, "Որ զձեզ ընդունի, զիս ընդունի"*), ամենայն ժամանակ աշխատեր են՝ որպէս Հրէական Աստուածպաշտութեան միջոցների սրբացեալ Նահապետաց և Մարգարէից յարգն ու պատիւն՝ յամենայն դէպս պահպանել՝ նոցա գրուածքներն սրբութեամբ ընդունելով և կատարելով. նոյնպէս և Քրիստոնէութեան դարերի մէջ գտնված սրբոց Առաքելոց, Հայրապետաց, Վարդապետաց, Նահատակաց և ամենայն սրբոց գրուածքներն ընդունելով՝ պինդ տպաւորել իւրեանց յիշողականութեան մէջ, և ամենայն յարգանօք մեծարել են նոցա սուրբ յիշատակներն և նշխարական տեղերն. և Քրիստոսի հրամանն կատարելով թէ "Որ զձեզ ընդունի, զիս ընդունի" փառաւորել են նոցա նշխարքն. և յամենայն դէպս բարեխօս կացուցել Աստուծոյ առաջին՝ սուրբ Աւետարանից սովորած, որ երբ Հայոց սուրբ Աբգար Թագաւորի ուղարկած 'ի Պաղեստին Աբգարունի գործով դեսպանքն՝ հանդիպելով Երուսաղէմ, ուր և լսելով Քրիստոսի Տեառն մերոյ հրաշագործութիւնքն՝ փութացան տեսանել Նորան, դիմեցին նախ՝ Փիլիպպոս Առաքելոյ մօտ, որն Անդրէաս Առաքելոյ հետ միասին յայտնելով Քրիստոսին՝ խնդրեցին հրաման զԱբգարու դեսպանքն ներկայացուցանելոյ համար, որպէս Թագաւորաց սովորութիւնն էր, և իւրեանց բարեխօսութեամբն Թոյլտուութիւն առնելով՝ ներկայացուցին Քրիստոսին. որոց և Տէրն Յիսուս յայտնեց իւր ուրախութիւնն. և երանի տուեց նրանց, որ առանց տեսնելոյ կ'հաւատան իրեն և ամենայն պատուէրներն կ'կատարեն*):

Այս Աւետարանական գրուածոց բացատրութիւնն ամենայն մարդ կարէ տեսանել Մովսէս Խորենացի մեծ Վարդապետի Ազգային պատմագրութեան մէջ**), և Քրիստոսի սուրբ Դաստառակի պատմութեան՝ և Աբգար Թագաւորի կենսագրութեան մէջ, և զանազան Ազգային և օտարական գրուածոց մէջ, որպէս և Կիպրացի Եպիփան Եպիսկոպոսի Ճառախօսութեան մէջ տպագրուած Ս. Էջմիածնի Արարատ ամսագրի դեկտ. 1869 ամի թիւ Բ. երեսներումն 129 ց135:

Այսպէս Հայք քաջ տպաւորելով իւրեանց հոգւոց մէջ Տեառն Յիսուսի փրկարար պատուէրը, միշտ աշխատեր են յանուն Քրիստոնէութեան՝ սրբոց տօնելէ

(*) Մատթ. Աւետ. Գլ. Ժ. համար 40:

(*) Յօհան. ԺԲ. 20. և Ի. 29.

(**) Խորեն.

անուանքն կացուցանել բարեխօս Աստուծոյ առաջին, և նրանց բարեխօսութեամբն մարմնոյ, սատանայի և աշխարհքի շատ փորձանքներից և Աստուծոյ բարկութեան պատահարներից ազատ մնացել. և յարգեր են սրբոց նշխարքը, յորս հանգուցեալ են շնորհքն Աստուածային: Այս մասին հազարաւոր ճշմարտասէր և ճշմարտաքարոզ մատենագիրք և պատմագիրք ամենայն ստուգութեամբ գրել են և զօրաւոր փաստերով հաստատել և վաւերացուցել զանազան ժամանակներում:

Այժմ խօսքս միայն մեր Ազգի բարեպաշտ սովորութեանց վրայ է, որ սուրբ Գրիգոր Լուսաւորչի բազմաչարչար աշխատութեամբ քրիստոնէութեան սուրբ հաւատն ընդունելոյ ժամանակիցն սկսած ցայսօր՝ ուխտաւորութեան սրբազան պարտքը կատարելով բաւականացել են միշտ և մխիթարել հոգեպէս: Իւրաքանչիւր գաւառի Հայ-ժողովուրդք ունեցել են իւրեանց յատուկ ուխտատեղին, և այն պատճառաւ մեր երջանիկ նախնիքն մեծածախ գումարաւ շինել և պատրաստել են հռչակաւոր և հոյակապ վանքեր, որ այսօր հարիւրաւոր տարիներ հոլովելով՝ դեռ շատերն կանգուն կան նախնեաց փառաւոր և անմահ յիշատակի համար. որոց ներկայ դրութեան ստորագրութիւնն համաձայն պաշտելի հրամանի Վեհափառ Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ ժողոված և կարգաւորած եմ ես յանցեալ տարին, և 'ի ժամանակին տպագրութեամբ կ'հրատարակուի հարկաւոր ծանօթութեամբք հանդերձ:

Դեռ քրիստոնէութեան առաջին դարերից սրբազան Թադէոս և Բարդուղեմէոս Առաքելոց 'ի Հայաստան քարոզութեան միջոցին, հիմնարկվեցան շատ վանքեր, որպէս Նախիջևանայ գաւառի մէջ՝ Ս. Թովմայ Առաքելոյ վանքն յԱգուլիս, և Ս. Նախավկայի վանքն մերձ 'ի Հին-Ջուղայ՝ Երասխի հարաւային եզերքին Դարաշամբ գիւղի մօտ, և նոյն իսկ Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց վանքերն յԱրտազ (Մակու) և յԱղբակ՝ Հայաստանի Պարսկահայք նահանգում (այժմ Պարսկաստանի Ատրպատական աշխարհ-Ադրբէջան-) կառուցվեցան նոցա նահատակութեան սուրբ տեղերումն. նոյն իսկ քրիստոնէութեան առաջին դարումն, որոց շրջակայ դաշտերն առաւել ևս անուանի եղան Ս. Վարդանանց քաջ զօրավարաց այնտեղ հաւատոյ յաղթութեան դրօշակն ամենայն փառաւորութեամբ կանգնեցնելոյ համար, խորտակելով բարբարոս Պարսից քրիստոնէութեան դէմ փակած երկաթի դռներն, և ազատութեան կաշկանդող շղթաններն, և ցայսօր նոցա հզօր յաղթանակութեան շնորհիւն և զօրաւոր բարեխօսութեամբն կայ և մնայ Հայաստանեայցս ուղղափառ Ս. Եկեղեցին 'ի խորին խաղաղութեան ըստ հաւատոյս. թէև արտաքին թշնամիք երբեմն երբեմն մանաւանդ վերջին դարերումս՝ յարուցին ոչ սակաւ հալածանս Եկեղեցւոյ վերայ, և նեղեցին նորա որդւոց, բայց Ամենակալն Աստուած՝ չ'թողեց Պարսից մինչ իսպառ վշտացնել նոցա:

Էջմիածնայ գաւառն առաւել հարուստ է ուխտատեղւոյ մասին՝ Ս. Էջմիածինն ունելով իւր մէջ, որ մեր Ազգութեան ամենամեծ և հռչակաւոր պաշտելի նուիրական տունն է և Ազգային ժառանգու-

թիւնն, որ Քրիստոսի 303 թուին՝ Տեառն Յիսուսի յատկապէս այցելութեամբ, հըրեշտակի ձեռակերպութեամբ, սուրբ Գրիգոր Լուսաւորչի տնօրէնութեամբ, և Տրդատ թագաւորի վերակացութեամբ շինուած է և պատրաստուած, ինչպէս ականատես վկայն մեծին Գրիգորի անցիցն և գործոց՝ քաջ քարտուղարն Տրդատայ՝ Ագաթանգեղոս Հռոմայեցին գրեալ է։ Էջմիածնայ գաւառն՝ որ նոյնինքն է Արարատեան դաշտ կամ գաւառ, և երբեմն նահանգ, ունի այլ ևս քանի նշանաւոր վանքեր, Էջմիածնայ մերձակայ Ս. Գայիանէի և Հռիփսիմէի և Մանեայ (այժմ Շողակաթ) վանքերն, Յովհաննու վանքըն, Սաղմոսավանքն և Մօղնւոյ Ս. Գէորգայ վանքն, Գառնւոյ Ս. Գեղարդայ և Երուաշատայ Խոր-Վիրապայ սուրբ Գրիգորի վանօրայքն և այլ շատ վանօրայք ևս՝ շէն և աւերակ, ամենայն ծաղկածին լերանց վրայ, գեղեցկադիր հովտաց մէջ, առողջարար օդոյ և ջրոյ մօտ. որոց մէջ հաստատուած մեծին Սահակայ և Ներսիսի հրամանաւն դպրոցաց ուսանողքն երբեմն ոչ սակաւ մխիթարեցին զԱզգն և պայծառացուցին զԵկեղեցին՝ իւրեանց աշխատութեամբքն և երևելի և զօրաւոր գրուածքներովն։ Էջմիածնայ գաւառի Մասեացոտն գաւառկի (Սուրմալու) մէջ է և սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի երբեմն հռչակաւոր վանքն, որ Արարատ լեռան՝ նշանաւոր պատառուածով բացուած ահագին ձորի մէջ՝ մի տափարակ բլրակի վրայ էր շինուած, դեռ սուրբ Գրիգոր Լուսաւորչի ժամանակից, ըստ որում սուրբ Յակոբ Հայրապետն՝ ըստ պատմութեան Զենոբայ և Յայսմաւուրաց և յոլով արտաքին գրեանց՝ էր հօրաքեռորդին Ս. Լուսաւորչին մերոյ՝ նոյնպէս Պարթևական ազգից, որ Ս. Լուսաւորչեցն մկրտուելով՝ գնաց Մարութէ ճգնաւորի մօտ ճգնելոյ. որ տեղից Մծբին քաղաքի ժողովուրդը խնդրելով՝ Անտիոքայ Մելիտոս Պատրիարքին ձեռնադրել տուեց Եպիսկոպոս և ընդունեց իրեն Առաջնորդ։ Այս վանքն մինչև 1840 թուի յունիսի 20-ն կար ամբողջութեամբ, թէ շինուածքն և թէ միաբանական կարգի հաստատութեամբն, որպէս ականատես վկայքն պատմեն, 'ի թիւս որոց և երջանկայիշատակ Յովհաննէս Եպիսկոպոսն Շահխաթունեանց՝ իւր "Ստորագրութիւն հինգ գաւառացն Արարատայ" աշխատասիրած գրքի Բ. հատորի 5 երեսի մէջ՝ գրէ հետևեալ կարգաւն։

,,Ի ձիւնապատ գագաթանէ անտի մե-
,,ծին Մասեաց յարևելից հիւսիսոյ ցԱր-
,,կոռի գեղջ՝ պատառեալ է մարմին մե-
,,ծին լերինս. և յայսմ պատառուածի
,,են մեծամեծ ձորք և ծործորք, և 'ի վեր
,,անդր քան զաղբիւր սրբոյն Յակոբայ
,,գտանի վիհ մեծ անհնարին խորու-
,,թեամբ, զոր ռամիկք կոչեն սառցատուն.
,,զայս պատառուածոյ գրէ Խորենացին
,,'ի հատորն Ա. գլուխ 29։ Ստորոտք լե-
,,րինս 'ի հիւսիսոյ կողմանէ կարի խոնարհ
,,իջանէ ցդաշտ անդր և ցգետն Երասխ,
,,մասն արևելակողման գրեա թէ են խիճք
,,և աւազք հոսեալք 'ի վերուստ անտի
,,լերինն ըստ մեծի մասին 'ի պատառուա-
,,ծէ անտի հանապազորդեան իջմամբ հե-
,,ղեղացն. իսկ յայս հիւսիսակողմն են
,,կուտակ կուտակ բլրակք մեծամեծ քա-
,,րանց, սկսեալ յականէ Սեաւ ջրոյն և

,,ի՝ Բարակեթ անուանեալ գեղջէ (Տաշ-
,,բուռուն) ցԱրհաձի գիւղ, և անդր ցա-
,,ւերակն Արշակաւանի. այսր կողման մար-
,,մին լերինս ունի առաւել խորաձոր տե-
,,ղիս և ծործորս բացեալս 'ի հեղեղաց և
,,'ի գետնաշարժութեանց. յորոց քարինք
,,անկեալք 'ի բարձրութեանցն կան այն-
,,պէս կուտակեալք. 'ի կողմանէ աստի
,,առաւել հնարաւոր է ընթացից մարդոյ
,,ի վեր 'ի լեառն: Իսկ ստորոտքն արևել-
,,եան, հարաւային և արևմտեան կցեալք
,,են ընդ երից խոնարհ լերանց աղխելոց
,,ընդ այլ լերինս: Տարածութիւն ստորո-
,,տի լերինս դնին հնգօրեայ ճանապարհ
,,ձիաւոր առն: Ի բարձրութեան գագա-
,,թան սորա անդր քան զպատառուած պա-
,,տառուածին են երեք ձիւնաթաղ բըլ-
,,րակք, հիւսիսայինն խոնարհ, իսկ միւս
,,երկուքն արևելեան և արևմտեան սրա-
,,ծայրք և անմատչելիք իսպառ. յորս իսկ
,,նոքին Պարոն Պառրոտն և ընկերք իւր
,,չ՚կարացին մատչել յամին 1829 յամ-
,,սեանն սեպտեմբերի. և 'ի ստորոտի անդ
,,բլրակացն, ուր կարացին ժամանել, կա-
,,ռուցին փոքրիկ խաչ փայտեայ, յոր
,,դնդեալն էր տախտակ կապարեայ այսու
,,գրուածովք:

,,Այն սա եղև ապաստանարան ամե-
,,նայն քրիստոնէից. ըստ հրամանի Նո-
,,րին Կայսերական Մեծութեան Ինքնա-
,,կալին ամենայն Ռուսաց Նիկօլայ Պաւ-
,,լօվչին՝ քաջայաղթ սպառազէն բազկաւ
,,անպատմելի սպարապետին Պասկեւչին
,,Երևանայ 1829 սեպտեմբերի 17-ին:

,,Առաւել 'ի պատառուածի անդ է հե-
,,ղեղ՝ հալոցք ձեանց, քան յայլ կող-
,,մանս, որ հոսեալ հաստարակօրէն ընդ ձորն
,,և անցեալ զհիւսիսային կողմամբ աւա-
,,զանին աղբեր սրբոյն Յակոբայ և զհա-
,,րաւային կողմամբ Մենաստանին նոյն
,,Սրբոյ՝ մտանէ 'ի գեղամէջ անդր Ակո-
,,ռոյ, և դարձուցեալ զաղօրիսն՝ իջանէ
,,յառոգումն արտօրէից և այգեստանեայց
,,այնր գեղջ: Նա երբեմն 'ի փլուզանել
,,և յանկանել լեռնանման մեծակուտակ
,,ձեան հիւսիսոյ 'ի կատարածէ անտի պա-
,,տառուածին ընդ զառ 'ի վայրն, թնդիւն
,,և արձագանք մեծահնչիւն արձակի,
,,մինչ յահէ իսկ լինել 'ի դաշտամէջ անդր
,,հարուստ հեռաւորութեամբ, և այն
,,յորդահոսան հեղեղ՝ իւրով սրնթա-
,,ցութեամբ երբեմն երբեմն վնաս մեծ
,,գործէր գեղջն և անդաստանացն:

,, Այս գիւղ բազմամարդ և Մենաս-
,,տանն վերոյիշեալ Սրբոյն բնակչօք և ա-
,,նասնօք հանդերձ ծածկեցան ընդ քան-
,,դուածովք լերինն, ընդ ձեամբ, ընդ սա-
,,ռուցօք և ընդ խճովք և մեծամեծ քա-
,,րամբք՝ հոսելովք 'ի վերուստ անտի ընդ
,,զառ 'ի վայր հեղեղացն՝ 'ի շարժէն եղե-
,,լոյ յանցեալ 1840 ամի 'ի 20-ն յունիսի:

(Մնացեալն է յետագայս.)

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԶ·րդ ԳԼԽՈՅ

## ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԵՒ ՕՒՍԱՆԻԼ ԻՐԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ.

Ցանել և տնկել իմանալու համար պէտք է որոշեալ հմտութիւն և գիտութիւն ունենալ·